ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Օզոնային շերտի քայքայման մասին մարդկության մտահոգությունները չեն սպառվում Վիեննայի և Մոնրեալի միջազգային պայմանագրերով: Կան ևս երեք այլ համաձայնագրեր, որոնք նկատելի չափով լրացնում և ամբողջացնում են օզոնային շերտի պահպանությանը վերաբերող պահանջները: Ներկայացնենք դրանք ամբողջության մեջ.

1. *«Օզոնային շերտի պահպանության մասին» Վիեննայի կոնվենցիա՝ ստորագրված 1985 թվականի մարտի 22-ին (Հայաստանի Հանրապետությունը միացել է 1999թ. ապրիլի 28-ին Ազգային ժողովի Ն-328-1 թվակիր որոշմամբ (ՍԴՈ-145),*
2. *«Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրություն՝ ստորագրված 1987 թվականի սեպտեմբերի 26-ին (Հայաստանի Հանրապետությունը միացել է 1999թ. ապրիլի 28-ին Ազգային ժողովի Ն-329-1 թվակիր որոշմամբ (ՍԴՈ-145),*
3. *«Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրության Պեկինյան փոփոխություն՝ ստորագրված 1999 թվականի դեկտեմբերի 3-ին (Հայաստանի Հանրապետությունը միացել է 2008թ. սեպտեմբերի 29-ին Ազգային ժողովի Ն-095-4 թվակիր որոշմամբ (ՍԴՈ-745),*
4. *«Կլիմայի փոփոխության մասին» Ռիո դե Ժանեյրոյում 1992 թվականի մայիսի 9-ին ստորագրված շրջանակային կոնվենցիա (վավերացվել է 1993թ. մարտի 31-ին ՀՀ Գերագույն խորհրդի Հ.Ն-0780-I թվակիր որոշմամբ),*
5. *«Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիային կից Կիոտոյի արձանագրություն՝ ստորագրված 1997 թվականի դեկտեմբերի 11-ին (վավերացվել է 2002թ. դեկտեմբերի 26-ին Ազգային ժողովի Ն-323-2 որոշմամբ (ՍԴՈ-394):*